

Հավելված N 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2004 թվականի սեպտեմբերի 16-ի N 109-Ն
որոշմամբ

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ

(10 ՄՎտ և ավելի տեղակայված հզորություն ունեցող արտադրող-բաշխող)

_____ 200_ թվական _____ ք. _____

(արտադրող ընկերության անվանումը)

այսուհետ՝ Վաճառող, ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մի կողմից,
և

(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Գնորդ, ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մյուս
կողմից, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը
(այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հաղորդող՝** Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
- Համակարգի օպերատոր՝** Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
- Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
- Հաշվարկային ամիս՝** Ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00⁰⁰-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24⁰⁰-ին.
- Հաշվարկային կենտրոն՝** Էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող

Հատուկ հաշիվ` իրավաբանական անձ.
Գնորդի կողմից Հայաստանի Հանրապետության առևտրային քանկում բացված հաշիվ, որի միջոցով Գնորդը կատարում է վճարումներ Վաճառողին և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Վաճառողը վաճառում, իսկ Գնորդը գնում է էլեկտրաէներգիա (հզորություն)` Պայմանագրով սահմանված կարգով:

3. ՎԱՃԱՌՔԻ ՄԱԿԱԳԻՆԸ

3.1 Էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագինը սահմանում է Հանձնաժողովը: Օրենքով սահմանված կարգով էլեկտրաէներգիան (հզորությունը) կարող են վաճառվել Հանձնաժողովի սահմանած սակագնից ավելի ցածր գնով: Էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի գինը ամրագրվում է N 1 հավելվածում:

3.2 Հանձնաժողովի կողմից սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից: Նման դեպքում Կողմերը պարտավոր են համապատասխան փոփոխություններ կատարել N 1 հավելվածում:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կողմերը պարտավորվում են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն պայմանագրով, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերով:

4.2 Վաճառողը պարտավորվում է.

ա) ապահովել էլեկտրաէներգիայի առաքումը Գնորդին սահմանազատման (առաքման) կետերում` էլեկտրաէներգիայի առուվաճառքի նախնական ամսական չափաքանակների և պայմանագրային հզորության սահմաններում (հավելված N 2)

բ) ապահովել Պայմանագրի N 2 հավելվածում ամրագրված հզորությունների պատրաստականությունը.

գ) իրականացնել իր սեփականությունը հանդիսացող, Պայմանագրով ամրագրված առևտրային հաշվառքի սարքերի սպասարկումը, պահպանումը.

դ) անհապաղ տեղեկացնել Գնորդին, Հաղորդողին և Հաշվարկային կենտրոնին իր էլեկտրակայանքներում տեղադրված առևտրային հաշվառքի սարքերի խափանման (թերությունների) մասին և ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում Գնորդի մասնակցությամբ վերացնել այն` Գնորդի հետ համատեղ կազմված համապատասխան ակտերը ներկայացնելով Հաշվարկային կենտրոն: Նշված ժամանակահատվածում առևտրային հաշվառքի սարքերով չհաշվառված էլեկտրաէներգիայի քանակությունը հաշվառվում է էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի 2.3 կետի համաձայն.

ե) Գնորդի հետ համաձայնեցված կարգով ապահովել Գնորդի լիազոր ներկայացուցչի մուտքը իր տարածք` անհրաժեշտ զննումներ (ստուգումներ) կատարելու համար:

4.3 Գնորդը պարտավորվում է.

ա) գնել Վաճառողի առաքած էլեկտրաէներգիան (հզորությունը) և վճարել դրա համար՝ Պայմանագրով սահմանված կարգով.

բ) էլեկտրաէներգիայի պայմանագրային չափաքանակների կամ պայմանագրային հզորությունների փոփոխություն նախատեսելու դեպքում, մինչև յուրաքանչյուր ամսի 20-ը, Վաճառողի և Համակարգի օպերատորի համաձայնեցմանը ներկայացնել էլեկտրաէներգիայի սպառման հաջորդ ամսվա չափաքանակների և պայմանագրային հզորությունների փոփոխման վերաբերյալ հայտը, որի հիման վրա կնքվում է համաձայնագիր.

գ) կնքել համապատասխան պայմանագրեր Համակարգի օպերատորի, Հաշվարկային կենտրոնի և Հաղորդողի հետ, այդ պայմանագրերով պատվիրել համապատասխան ծառայություններ՝ ինքնուրույն և իր հաշվին կատարելով այդ ծառայությունների դիմաց վճարումները: Պատվիրված ծառայությունները մատուցողների կողմից պետք է իրականացվեն գործունեության լիցենզիայի պայմանների, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, տեխնիկական կանոնակարգերի և Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջներին և պայմաններին համապատասխան:

5. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

5.1. Վաճառողի կողմից Գնորդին առաքված էլեկտրաէներգիան (հզորությունը) հաշվառում է Հաշվարկային կենտրոնը՝ էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի համաձայն:

5.2. Առաքված էլեկտրաէներգիայի հաշվառումը Հաշվարկային կենտրոնը կատարում է Վաճառողի սահմանազատման կետերի համար՝ Պայմանագրի N 3 հավելվածում ամրագրված հաշվառքի սարքերից ստացված հաշվառման տվյալների հիման վրա:

5.3 Հաշվարկային ամսվա վերջի դրությամբ հաշվառքի սարքերի տվյալների հիման վրա Հաշվարկային կենտրոնը կազմում է վճարման ենթակա էլեկտրաէներգիայի վերաբերյալ ակտը և ներկայացնում Կողմերի ստորագրմանը մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա _____ -ը:

5.4 Վճարման ենթակա հզորությունը Հաշվարկային կենտրոնը հաշվառում է Համակարգի օպերատորի կողմից ներկայացված Վաճառողի պատրաստ հզորությունների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա: Եթե Հաշվարկային ամսվա համար Համակարգի օպերատորի կողմից ներկայացված Վաճառողի պատրաստ հզորությունների վերաբերյալ տեղեկատվության մեջ ամրագրված են փաստացի պատրաստ հզորության տարբեր մակարդակներ, ապա որպես Վաճառողին վճարման ենթակա հզորություն հաշվառվում է դրանց միջին կշռությային մեծությունը: Ընդ որում, Հաշվարկային ամսվա համար այն չի կարող գերազանցել պայմանագրում ամրագրված մեծությունը:

6. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 5-ից Գնորդի հատուկ հաշվում մուտքագրված գումարները Վաճառողի կողմից Հաշվարկային ամսվա ընթացքում վաճառված էլեկտրաէներգիայի (հզորության) արժեքի չափով գրավադրվում են

Վաճառողի օգտին՝ մինչև Գնորդի կողմից Վաճառողի նկատմամբ Հաշվարկային ամսվա վերջի դրությամբ առկա պարտավորությունների լրիվ կատարումը:

6.2 Վճարման ենթակա էլեկտրաէներգիայի (հզորության) վերաբերյալ ակտը (հավելված N 4) ստորագրելուց հետո մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 15-ը Վաճառողն իր կողմից վաճառված էլեկտրաէներգիայի (հզորության) համար կազմում է հաշիվ-ապրանքագիր և ներկայացնում Գնորդին:

6.3 Գնորդը Հաշվարկային ամսվա ընթացքում գնված էլեկտրաէներգիայի (հզորության) դիմաց վճարումը կատարում է իր Հատուկ հաշվից՝ մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 25-ը:

6.4 Վաճառողի և Գնորդի միջև գրավոր համաձայնության (պայմանագրի) առկայության դեպքում Գնորդը կարող է իրականացնել ոչ դրամային վճարումներ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2 Սույն պայմանագրի 6.3 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում, Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 30-ից Գնորդը վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով: Ընդ որում, առաջնահերթության կարգով վճարվում է տույժը, ապա չվճարված գումարը:

8. ՖՈՐՍ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

8.1 Կողմերն ազատվում են պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրանք հետևանք են արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են Կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, ինչպես նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Կողմերի գործունեությանը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրանց գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

8.2 Կողմերը պարտավոր են վերոհիշյալ վիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

9. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Առևտրային և վերստուգիչ հաշվառքի սարքերն ու դրանց միացման շղթաները ստուգում և կապարակնքում են Կողմերը՝ Հաշվարկային կենտրոնի մասնակցությամբ:

9.2. Առևտրային և վերստուգիչ հաշվառքի սարքերի սպասարկումն ու շահագործումն ապահովվում է սեփականատերերի կողմից՝ իրենց միջոցներով: Առևտրային և վերստուգիչ հաշվառքի սարքերի փոխարինման դեպքում Կողմերը համատեղ կազմում են համապատասխան ակտ՝ այն ներկայացնելով Հաշվարկային կենտրոն:

9.3 Էլեկտրաէներգետիկական համակարգի վթարային իրավիճակներում Համակարգի օպերատորն՝ իրավունք ունի փոխել Վաճառողի՝ նախօրոք հայտարարված բեռնվածքի օրական գրաֆիկը՝ այդ մասին տեղեկացնելով Կողմերին:

9.4 Կրիտիկական (վթարային) իրավիճակների սկիզբն ու ավարտը հայտարարում է Համակարգի օպերատորը՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Կողմերին՝ համաձայն Հանձնաժողովի սահմանած կարգի:

9.5 Կողմերը պարտավոր են անվերապահորեն կատարել Համակարգի օպերատորի՝ իր լիազորությունների սահմաններում տրված կարգավարական կարգադրությունները (հրահանգները):

9.6 Կողմերը պարտավոր են Պայմանագրի պատճենները տրամադրել Հաշվարկային կենտրոնին և Համակարգի օպերատորին:

9.7 Վաճառողն էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց հետ էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագիր կնքելիս այդ մասին տեղեկացնում է Գնորդին և Համակարգի օպերատորին:

9.8 Պայմանագրով ամրագրված էլեկտրաէներգիայի նախնական ամսական չափաքանակները և պայմանագրային հզորությունները կարող են փոփոխվել Կողմերի կամ Համակարգի օպերատորի նախաձեռնությամբ:

10. ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

10.1 Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

10.2 Եթե տարաձայնության առարկան Հաշվարկային կենտրոնի կողմից ներկայացված վճարման ենթակա էլեկտրաէներգիայի (հզորության) վերաբերյալ ակտն է, ապա ցանկացած դեպքում Կողմերը պարտավոր են ստորագրել այդ ակտը, իսկ Գնորդը պարտավոր է կատարել վճարումը, որից հետո միայն լուծել տարաձայնությունը: Տարաձայնություն ունեցող կողմը պարտավոր վճարման ենթակա էլեկտրաէներգիայի (հզորության) վերաբերյալ ստորագրած ակտին կցել հատուկ կարծիք:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(լրացնում են Կողմերը՝ կախված Վաճառողի հիմնական սարքավորումների առանձնահատկություններից, ըստ Կողմերի հայեցողության)

12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից և գործում է մինչև 200__թվականի_____:

12.2 Պայմանագիրը կարող է փոփոխվել փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխված պայմանագիրը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից:

12.3 Հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի (10ՄՎտ և ավելի տեղակայված հզորություն ունեցող արտադրող-բաշխող) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրերում՝ ներկայացնելով դրանք Հանձնաժողովի գրանցմանը: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

12.4 Պայմանագիրը կազմված է 3 օրինակից՝ մեկական Կողմերի և Հանձնաժողովի համար:

13. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Հավելված N 1 Էլեկտրաէներգիայի (հզորության) գնի մասին համաձայնագիր

Հավելված N 2 Էլեկտրաէներգիայի նախնական չափաքանակների և պայմանագրային հզորության մասին համաձայնագիր

Հավելված N 3 Վաճառողի սահմանազատման (առաքման) և էլեկտրաէներգիայի հաշվառման կետերի մասին համաձայնագիր

Հավելված N 4 Վճարման ենթակա էլեկտրաէներգիայի (հզորության) վերաբերյալ ակտ

14. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ

Վաճառող՝
գտնվելու վայրը _____
Հ/հ _____
Հեռախոս
Ֆաքս
Գործունեության լիցենզիա N
Ղեկավար

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Գնորդ՝
գտնվելու վայրը _____
Հ/հ _____
Հեռախոս
Ֆաքս
Գործունեության լիցենզիա N
Ղեկավար

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

Գրանցված է _____ 200__ թվական

Գրանցման N _____

Կ.Տ.

Պատասխանատու _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԳՆԻ ՄԱՍԻՆ

1. Սույն համաձայնագրով Գնորդը և Վաճառողը փոխադարձ համաձայնությամբ սահմանում են էլեկտրական էներգիայի (հզորության) հետևյալ սակագնային դրույքները.

Էլեկտրական էներգիայի դրույքը` _____ դրամ/կՎտժ
Էլեկտրական հզորության դրույքը` _____ դրամ/կՎտ ամիս
հաստատագրված վճար` _____ դրամ/ամիս

2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից Վաճառողի համար հաստատված գործող սակագինը հետևյալն է.

Էլեկտրական էներգիայի դրույքը` _____ դրամ/կՎտժ
Էլեկտրական հզորության դրույքը` _____ դրամ/կՎտամիս
հաստատագրված վճար` _____ դրամ/ամիս

3. Էլեկտրաէներգիայի (հզորության) գինը ուժի մեջ է մտնում 200_ թվականի _____ -ից և գործում է մինչև 200_ թվականի _____ -ը:

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200_ թվական

_____ 200_ թվական

Կ.Տ.

Կ.Տ.

Հավելված N 2
Էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի
200_ թվականի _____ N_ պայմանագրի

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Սույն համաձայնագրով Գնորդը և Վաճառողը փոխադարձ համաձայնությամբ սահմանում են էլեկտրաէներգիայի նախնական չափաքանակները և պայմանագրային հզորությունների հետևյալ մակարդակները.

	Ակտիվ հզորություն (կՎտ)	Էլեկտրաէներգիայի գնման նախնական չափաքանակներ (կՎտժ)
	Պայմանագրային	Այդ թվում տնօրինելի

Հունվար			
Փետրվար			
Մարտ			
Ապրիլ			
Մայիս			
Հունիս			
Հուլիս			
Օգոստոս			
Սեպտեմբեր			
Հոկտեմբեր			
Նոյեմբեր			
Դեկտեմբեր			

(Աղյուսակը փոփ. 02.03.05 N 19-Ն)

2. Եթե որևէ ամսվա ընթացքում նախատեսվում են ակտիվ հզորության պայմանագրային պատրաստականության տարբեր մակարդակներ, ապա աղյուսակում նշվում են այդ մակարդակները (կՎտ) և դրանց տևողությունները (օր):

3. Սույն համաձայնագրի 1-ին կետում նշված աղյուսակում լրացված էլեկտրաէներգիայի գնման նախնական չափաքանակները չեն հանդիսանում պայմանագրային մեծություն:

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200__ թվական

_____ 200__ թվական

Կ.Տ.

Կ.Տ.

Համաձայնեցված է

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՂԵՐԱՏՈՐ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200__ թվական

Կ.Տ.

(Հավելվածը փոփ. 02.03.05 N 19-Ն)

Հավելված N 3
 Էլեկտրաէներգիայի (հզորության) առավաճառքի
 200__ թվականի _____ N__ պայմանագրի

Հ Ա Մ Ա Չ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՎԱՃԱՌՈՂԻ ՄԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ (ԱՌԱՔՄԱՆ) ԵՎ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ

1. _____ -ի (Վաճառող) սահմանազատման (առաքման) կետերն են.

2. Առևտրային և վերստուգիչ հաշվառքի կետերը

Առևտրային հաշվառքի սարքերի տեղադրման վայրերը	Առևտրային հաշվառքի սարքերի համարը	Հոսանքի և լարման տր-ների փոխարկման գործակիցները			Վերահսկիչ հաշվառքի սարքերի տեղադրման վայրերը, N և տեսակը	Հոսանքի և լարման տր-ների փոխարկման գործակիցները		
		K _{հո}	K _{լո}	K _{լն}		K _{հո}	K _{լո}	K _{լն}

Առևտրային հաշվառքի սարքերը տնօրինում և սպասարկում է _____ -
ը:

Վերստուգիչ հաշվառքի սարքերը տնօրինում և սպասարկում է _____ -
ը:

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200__ թվական

_____ 200__ թվական

Վ.Տ.

Վ.Տ.

Համաձայնեցված է

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200__ թվական

Վ.Տ.

Հավելված N 4
Էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի
200__ թվականի _____ N__ պայմանագրի

Ա Վ Տ

ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնորդ _____

Վաճառող _____

Հաշվարկային ժամանակաշրջան _____ 200_ թ. մինչև _____ 200_ թ.

Ընդամենը առաքված էլեկտրական էներգիայի քանակությունը` _____ կՎտժ

Գնորդ _____

Վաճառող _____

Հաշվարկային ժամանակաշրջան _____ 200_ թ. մինչև _____ 200_ թ.

Վճարման ենթակա հզորությունները

_____ 200_ թ. մինչև _____ 200_ թ. _____ կՎտ

_____ 200_ թ. մինչև _____ 200_ թ. _____ կՎտ

_____ 200_ թ. մինչև _____ 200_ թ. _____ կՎտ

Հիմքը _____

ՎԱՃԱՌՈՂ

ԳՆՈՐԴ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200_ թվական

_____ 200_ թվական

Վ.Տ.

Վ.Տ.

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200_ թվական

Վ.Տ.

Հավելված N 2

Հաստատված է

*Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2004 թվականի սեպտեմբերի 16-ի N 109-Ն
 որոշմամբ*

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ
(մինչև 10 ՄՎտ տեղակայված հզորություն ունեցող արտադրող /փոքր
հիդրոէլեկտրակայաններ/-բաշխող)

_____ 200_ թվական _____ ք. _____

_____,
(արտադրող ընկերության անվանումը)

այսուհետ՝ Վաճառող, ի դեմս _____

_____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մի կողմից,
և

_____,
(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Գնորդ, ի դեմս _____

_____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մյուս
կողմից, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը
հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- | | |
|----------------------|---|
| Հաղորդող՝ | Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ. |
| Համակարգի օպերատոր՝ | Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող իրավաբանական անձ. |
| Հանձնաժողով՝ | Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով. |
| Հաշվարկային ամիս՝ | Ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00 ⁰⁰ -ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24 ⁰⁰ -ին. |
| Հաշվարկային կենտրոն՝ | Էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ. |
| Հատուկ հաշիվ՝ | Գնորդի կողմից Հայաստանի Հանրապետության առևտրային բանկում բացված հաշիվ, որի միջոցով Գնորդը կատարում է վճարումներ Վաճառողին և Էլեկտրաէներգետիկական |

համակարգի լիցենզավորված այլ անձանց:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Վաճառողը վաճառում, իսկ Գնորդը ամբողջությամբ գնում է Վաճառողի առաքած էլեկտրաէներգիան՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:

3. ՎԱՃԱՌՔԻ ՍԱԿԱԳԻՆԸ

3.1 Էլեկտրաէներգիայի վաճառքի սակագինը սահմանում է Հանձնաժողովը: Օրենքով սահմանված կարգով էլեկտրաէներգիան կարող է վաճառվել Հանձնաժողովի սահմանած սակագնից ավելի ցածր գնով: Էլեկտրաէներգիայի վաճառքի գինը ամրագրվում է N 1 հավելվածում:

3.2 Հանձնաժողովի կողմից սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից: Նման դեպքում Կողմերը պարտավոր են համապատասխան փոփոխություններ կատարել N 1 հավելվածում:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կողմերը պարտավորվում են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն պայմանագրով, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերով:

4.2 Վաճառողը պարտավորվում է.

ա) ապահովել էլեկտրաէներգիայի առաքումը Գնորդին սահմանազատման (առաքման) կետերում.

բ) իրականացնել իր սեփականություն հանդիսացող, սույն պայմանագրով ամրագրված առևտրային հաշվառքի սարքերի սպասարկումը, պահպանումը.

գ) անհապաղ տեղեկացնել Գնորդին, Հաղորդողին և Հաշվարկային կենտրոնին իր էլեկտրակայանքներում տեղադրված առևտրային հաշվառքի սարքերի խափանման (թերությունների) մասին և ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում Գնորդի մասնակցությամբ վերացնել այն՝ Գնորդի հետ համատեղ կազմված համապատասխան ակտերը ներկայացնելով Հաշվարկային կենտրոն: Նշված ժամանակահատվածում առևտրային հաշվառքի սարքերով չհաշվառված էլեկտրաէներգիայի քանակությունը հաշվառվում է էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի 2.3 կետի համաձայն.

դ) Գնորդի հետ համաձայնեցված կարգով ապահովել Գնորդի լիազոր ներկայացուցչի մուտքը իր տարածք՝ անհրաժեշտ զննումներ (ստուգումներ) կատարելու համար:

4.3 Գնորդը պարտավորվում է.

ա) ընդունել Վաճառողի առաքած էլեկտրաէներգիան ամբողջությամբ,

բ) վճարել առաքված էլեկտրաէներգիայի համար՝ սույն պայմանագրով սահմանված կարգով,

գ) կնքել համապատասխան պայմանագրեր Համակարգի օպերատորի, Հաշվարկային կենտրոնի և Հաղորդողի հետ, այդ պայմանագրերով պատվիրել համապատասխան ծառայություններ՝ ինքնուրույն և իր հաշվին կատարելով այդ

ծառայությունների դիմաց վճարումները: Պատվիրված ծառայությունները մատուցողների կողմից պետք է իրականացվեն գործունեության լիցենզիայի պայմանների, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, տեխնիկական կանոնակարգերի և Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջներին և պայմաններին համապատասխան:

5. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

5.1. Վաճառողի կողմից Գնորդին առաքված էլեկտրաէներգիան հաշվառում է Հաշվարկային կենտրոնը էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի համաձայն:

5.2. Առաքված էլեկտրաէներգիայի հաշվառումը Հաշվարկային կենտրոնը կատարում է Վաճառողի սահմանազատման կետերի համար՝ սույն պայմանագրի N 2 հավելվածում ամրագրված հաշվառքի սարքերից ստացված հաշվառման տվյալների հիման վրա:

5.3 Հաշվարկային ամսվա վերջի դրությամբ հաշվառքի սարքերի տվյալների հիման վրա Հաշվարկային կենտրոնը կազմում է վճարման ենթակա էլեկտրաէներգիայի վերաբերյալ ակտը և ներկայացնում Կողմերի ստորագրմանը մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա _____ -ը:

6. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Վճարման ենթակա էլեկտրաէներգիայի վերաբերյալ ակտը (հավելված N 3) ստորագրելուց հետո մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 15-ը Վաճառողը իր կողմից առաքված էլեկտրաէներգիայի համար կազմում է հաշիվ-ապրանքագիր և ներկայացնում Գնորդին:

6.2 Գնորդը Հաշվարկային ամսվա ընթացքում առաքված էլեկտրաէներգիայի դիմաց վճարումը կատարում է մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 25-ը՝ Հատուկ հաշվից:

6.3 Վաճառողի և Գնորդի միջև գրավոր համաձայնության (պայմանագրի) ստեղծման պահանջները Գնորդը կարող է իրականացնել ոչ դրամային վճարումներ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2 Սույն պայմանագրի 6.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում, Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 30-ից Գնորդը վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով: Ընդ որում, առաջնահերթության կարգով վճարվում է տույժը, ապա չվճարված գումարը:

8. ՖՈՐՍ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

8.1 Կողմերն ազատվում են պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե

դրանք հետևանք են արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են Կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Կողմերի գործունեությանը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրանց գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

8.2 Կողմերը պարտավոր են վերոհիշյալ վիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

9. ՏԱՐԱՃԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

9.1 Պայմանագրի հետ կապված Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի առկայության դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

9.2 Եթե տարաձայնության առարկան Հաշվարկային կենտրոնի կողմից ներկայացված վճարման ենթակա էլեկտրաէներգիայի վերաբերյալ ակտն է, ապա ցանկացած դեպքում Կողմերը պարտավոր են ստորագրել այդ ակտը, իսկ Գնորդը պարտավոր է կատարել վճարումը, որից հետո միայն լուծել տարաձայնությունը: Տարաձայնություն ունեցող կողմը պարտավոր է վճարման ենթակա էլեկտրաէներգիայի վերաբերյալ ստորագրած ակտին կցել հատուկ կարծիք:

10. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1 Առևտրային և վերստուգիչ հաշվառքի սարքերն ու դրանց միացման շղթաները ստուգում և կապարակնքում են Կողմերը՝ Հաշվարկային կենտրոնի մասնակցությամբ:

10.2 Առևտրային և վերստուգիչ հաշվառքի սարքերի սպասարկումն ու շահագործումն ապահովվում է սեփականատերերի կողմից՝ իրենց միջոցներով: Առևտրային և վերստուգիչ հաշվառքի սարքերի փոխարինման դեպքում Կողմերը համատեղ կազմում են համապատասխան ակտ՝ այն ներկայացնելով Հաշվարկային կենտրոն:

10.3 Էլեկտրաէներգետիկական համակարգի վթարային իրավիճակներում Համակարգի օպերատորը՝ իրավունք ունի սահմանափակել կամ դադարեցնել Վաճառողի կողմից էլեկտրաէներգիայի առաքումները:

10.4 Վթարային իրավիճակների սկիզբն ու ավարտը հայտարարում է Համակարգի օպերատորը՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Կողմերին՝ համաձայն Հանձնաժողովի սահմանած կարգի:

10.5 Կողմերը պարտավոր են անվերապահորեն կատարել Համակարգի օպերատորի՝ վերջինիս լիազորությունների սահմաններում տրված կարգադրությունները (հրահանգները):

10.6 Կողմերը պարտավոր են Պայմանագրի պատճենները տրամադրել Հաշվարկային կենտրոնին և Համակարգի օպերատորին:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի կողմից գրանցման պահից և գործում է մինչև 200__ թվականի_____:

12.2 Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխված պայմանագիրը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի կողմից գրանցման պահից:

12.3 Հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի առուվաճառքի (մինչև 10ՄՎտ տեղակայված հզորություն ունեցող արտադրող /փոքր հիդրոէլեկտրակայաններ/-բաշխող) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրերում՝ ներկայացնելով դրանք Հանձնաժողովի գրանցմանը: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

12.4 Սույն պայմանագիրը կազմված է 3 օրինակից՝ մեկական Կողմերի և Հանձնաժողովի համար:

13. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Հավելված N 1 Էլեկտրաէներգիայի գնի մասին համաձայնագիր
Հավելված N 2 Վաճառողի սահմանազատման (առաքման) և էլեկտրաէներգիայի հաշվառման կետերի մասին համաձայնագիր
Հավելված N 3 Վճարման ենթակա էլեկտրաէներգիայի վերաբերյալ ակտ

14. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ

Վաճառող՝
գտնվելու վայրը _____
Հ/հ _____
Հեռախոս
Ֆաքս
Գործունեության լիցենզիա N
Ղեկավար

Գնորդ՝
գտնվելու վայրը _____
Հ/հ _____
Հեռախոս
Ֆաքս
Գործունեության լիցենզիա N
Ղեկավար

(ստորագրություն, անուն, ազգանուն)

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

Գրանցված է _____ 200__ թվական

Գրանցման N _____

Կ.Տ.

Պատասխանատու _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հավելված N 1

Էլեկտրաէներգիայի առուվաճառքի

200__ թվականի _____ N__ պայմանագրի

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ

1. Սույն համաձայնագրով Գնորդը և Վաճառողը փոխադարձ համաձայնությամբ սահմանում են էլեկտրական էներգիայի հետևյալ գինը.

Էլեկտրական էներգիայի գին _____ դրամ/կՎտժ

2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից Վաճառողի համար հաստատված գործող սակագինը հետևյալն է.

Էլեկտրական էներգիայի սակագին՝ _____ դրամ/կՎտժ

3. Էլեկտրաէներգիայի գինը ուժի մեջ է մտնում 200__ թվականի _____ -ից և գործում է մինչև 200__ թվականի _____ -ը:

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200__ թվական

_____ 200__ թվական

Կ.Տ.

Կ.Տ.

Հավելված N 2

Էլեկտրաէներգիայի առուվաճառքի

200__ թվականի _____ N__ պայմանագրի

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՎԱՃԱՌՈՂԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ (ԱՌԱՔՄԱՆ) ԵՎ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ

1. _____-ի (Վաճառող) սահմանազատման (առաքման) կետերն են.

2. Առևտրային և վերստուգիչ հաշվառքի կետերը

Առևտրային հաշվառքի սարքերի տեղադրման վայրերը	Առևտրային հաշվառքի սարքերի համարը	Հոսանքի և լարման տր-ների փոխարկման գործակիցները			Վերահսկիչ հաշվառքի սարքերի տեղադրման վայրերը, N և տեսակը	Հոսանքի և լարման տր-ների փոխարկման գործակիցները		
		K _{հտ}	K _{լտ}	K _{լտ}		K _{հտ}	K _{լտ}	K _{լտ}

Առևտրային հաշվառքի սարքերը տնօրինում և սպասարկում է _____-ը:

Վերստուգիչ հաշվառքի սարքերը տնօրինում և սպասարկում է _____-ը:

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____200__ թվական

_____200__ թվական

Կ.Տ.

Կ.Տ.

**Համաձայնեցված է
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____200__ թվական

Կ.Տ.

Հավելված N 3
Էլեկտրաէներգիայի առուվաճառքի
200__ թվականի _____ N__ պայմանագրի

Ա Կ Տ

ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնորդ _____

Վաճառող _____

Հաշվարկային ժամանակաշրջան _____ 200_ թ. մինչև _____ 200_թ.

Ընդամենը առաքված էլեկտրական էներգիայի քանակությունը՝ _____ կՎտժ

Հիմքը _____

ՎԱՃԱՌՈՂ

ԳՆՈՐԴ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200_ թվական

_____ 200_ թվական

Կ.Տ.

Կ.Տ.

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200_ թվական

Կ.Տ.

Հավելված N 3

Հաստատված է

*Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2004 թվականի սեպտեմբերի 16-ի N 109-Ն
որոշմամբ*

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր _____

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

(բաշխող-հաշվարկային կենտրոն)

_____ 200_ թվական

թ. _____

(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մի կողմից, և

_____ ,
(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Կատարող, ի դեմս _____

_____ ,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մյուս կողմից, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
- Հաշվարկային ամիս՝** Ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00⁰⁰-ին և ավարտվում է օրացուցային ամսվա վերջին օրվա ժամը 24⁰⁰-ին.
- Տորս մածոր՝** արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Կողմի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Կողմի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Կատարողը հաշվարկային կենտրոնի ծառայություններ է մատուցում, իսկ Պատվիրատուն վճարում է մատուցված ծառայությունների համար՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:

(2.1 կետը փոփ. 24.12.04 N 174-Ն)

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կողմերը պարտավոր են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, գործունեության լիցենզիայով, սույն պայմանագրով,

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերով:

3.2 Կողմերը պարտավոր են սույն պայմանագրի պատճենը տրամադրել էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության, հաղորդման և էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձանց:

3.3 Կատարողը պարտավոր է պատշաճ կերպով կատարել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն պայմանագրով, էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիայով, Հանձնաժողովի կողմից ընդունած իրավական ակտերով, էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրերով նախատեսված իր պարտավորությունները:

3.4 Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի, հատուկ հաշվից վճարումներ կատարելու և երաշխիքային գումարն օգտագործելու կարգի համաձայն վճարել Կատարողին՝ վերջինիս մատուցած ծառայությունների դիմաց, ինչպես նաև պատշաճ կերպով կատարել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն պայմանագրով, էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիայով, Հանձնաժողովի կողմից ընդունած իրավական ակտերով, էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի, հաղորդման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայությունների մատուցման պայմանագրերով նախատեսված այն պարտավորությունները, որոնք հնարավորություն կտան Կատարողին ժամանակին և ամբողջությամբ կատարելու իր պարտականությունները:

4. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման սակագինը սահմանում է Հանձնաժողովը:

4.2 Մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 15-ը Կատարողը իր մատուցած ծառայությունների համար կազմում է հաշիվ-ապրանքագիր և ներկայացնում Պատվիրատուին:

4.3 Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 5-ից Պատվիրատուի հատուկ հաշվում մուտքագրված գումարները Կատարողի կողմից Հաշվարկային ամսվա ընթացքում մատուցած ծառայությունների չափով համարվում են գրավադրված Կատարողի օգտին՝ մինչև Պատվիրատուի կողմից Կատարողի նկատմամբ Հաշվարկային ամսվա վերջի դրությամբ առկա դրամական պարտավորությունների լրիվ կատարումը:

4.4 Կատարողին իր մատուցած ծառայությունների համար իր հատուկ հաշվից վճարում է Պատվիրատուն՝ մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 25-ը:

4.5 Կատարողին իր մատուցած ծառայությունների համար վճարումներն իրականացվում են միայն դրամական միջոցներով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Սույն պայմանագրի 4.4 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում, Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 30-ից Պատվիրատուն վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով: Ընդ որում, առաջնահերթության կարգով վճարվում է տույժը, ապա չվճարված գումարը:

6. ՖՈՐՍ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

6.1 Սույն պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դրանք Ֆորս մատրիի հետևանք են:

6.2 Կողմերը պարտավոր են վերոհիշյալ վիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

7. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

7.1 Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

7.2 Եթե տարաձայնության առարկան Կատարողի կողմից իր մատուցած ծառայությունների համար ներկայացված հաշիվ-ապրանքագիրն է, ապա ցանկացած դեպքում Պատվիրատուն պարտավոր է ստորագրել այն և կատարել վճարումը, որից հետո միայն լուծել տարաձայնությունը: Պատվիրատուն իրավունք ունի ստորագրած հաշիվ-ապրանքագրին կցել հատուկ կարծիք:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ (կազմում են Կողմերը)

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից և գործում է մինչև 200__ թվականի _____:

9.2 Պայմանագիրը կարող է փոփոխվել փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխված պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից:

9.3 Հանձնաժողովի կողմից հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման (բաշխող-հաշվարկային կենտրոն) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ

կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրերում՝ ներկայացնելով այն Հանձնաժողովի գրանցմանը: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

9.4 Պայմանագիրը կազմված է երեք օրինակից՝ մեկական Կատարողի, Պատվիրատուի և Հանձնաժողովի համար:

10. ԿՈՂՄԵՐԻ ՔՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ՝

Պատվիրատու՝
գտնվելու վայրը _____
Հ/հ _____
Հեռախոս
Ֆաքս
Գործունեության լիցենզիա N
Ղեկավար

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կատարող՝
գտնվելու վայրը _____
Հ/հ _____
Հեռախոս
Ֆաքս
Գործունեության լիցենզիա N
Ղեկավար

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Գրանցված է _____ 200 _____ թվական
Գրանցման N _____ **Կ.Տ.**
Պատասխանատու _____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հավելված N 4

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2004 թվականի սեպտեմբերի 16-ի N 109-Ն
որոշմամբ

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր _____

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

(բաշխող-համակարգի օպերատոր)

_____ 200_ թվական _____ ք. _____

(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս _____ ,

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մի կողմից, և

(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Կատարող, ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մյուս կողմից, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
- Հաշվարկային ամիս՝** Ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00⁰⁰-ին և ավարտվում է օրացուցային ամսվա վերջին օրվա ժամը 24⁰⁰-ին.
- Տորս մատր՝** արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Կողմի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Կողմի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Կատարողը էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայություններ է մատուցում, իսկ Պատվիրատուն վճարում է մատուցված ծառայությունների համար՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:

(2.1 կետը փոփ. 24.12.04 N 174-Ն)

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կողմերը պարտավոր են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերով:

3.2 Կողմերը պարտավոր են սույն պայմանագրի պատճենը տրամադրել էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության, հաղորդման և էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձանց:

3.3 Կատարողը պարտավոր է պատշաճ կերպով կատարել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն պայմանագրով, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիայով, Հանձնաժողովի կողմից ընդունած իրավական ակտերով, տեխնիկական կանոնակարգերով, էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագրերով նախատեսված իր պարտավորությունները՝ ապահովելով էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշները:

3.4 Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի, հատուկ հաշվից վճարումներ կատարելու և երաշխիքային գումարն օգտագործելու կարգի համաձայն վճարել Կատարողին՝ վերջինիս մատուցած ծառայությունների դիմաց, ինչպես նաև պատշաճ կերպով կատարել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն պայմանագրով, էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիայով, Հանձնաժողովի կողմից ընդունած իրավական ակտերով, էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի, հաղորդման, հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման պայմանագրերով նախատեսված այն պարտավորությունները, որոնք հնարավորություն կտան Կատարողին ժամանակին և ամբողջությամբ կատարելու իր պարտականությունները:

4. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը սահմանում է Հանձնաժողովը:

4.2 Մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 15-ը Կատարողը իր մատուցած ծառայությունների համար կազմում է հաշիվ-ապրանքագիր և ներկայացնում Պատվիրատուին:

4.3 Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 5-ից Պատվիրատուի հատուկ հաշվում մուտքագրված գումարները Կատարողի կողմից Հաշվարկային ամսվա ընթացքում մատուցած ծառայությունների չափով համարվում են գրավադրված Կատարողի օգտին՝ մինչև Պատվիրատուի կողմից Կատարողի նկատմամբ Հաշվարկային ամսվա վերջի դրությամբ առկա դրամական պարտավորությունների լրիվ կատարումը:

4.4 Կատարողին իր մատուցած ծառայությունների համար իր հատուկ հաշվից վճարում է Պատվիրատուն՝ մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 25-ը:

4.5 Կատարողին իր մատուցած ծառայությունների համար վճարումներն իրականացվում են միայն դրամական միջոցներով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

5.2 Սույն պայմանագրի 4.4 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում, Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 30-ից Պատվիրատուն վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով: Ընդ որում, առաջնահերթության կարգով վճարվում է տույժը, ապա չվճարված գումարը:

6. Ֆորս մաժորային իրավիճակներ

6.1 Սույն պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դրանք Ֆորս մաժորի հետևանք են:

6.2 Կողմերը պարտավոր են վերոհիշյալ վիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

7. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

7.1 Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

7.2 Եթե տարաձայնության առարկան Կատարողի կողմից իր մատուցած ծառայությունների համար ներկայացված հաշիվ-ապրանքագիրն է, ապա ցանկացած դեպքում Պատվիրատուն պարտավոր է ստորագրել այն և կատարել վճարումը, որից հետո միայն լուծել տարաձայնությունը: Պատվիրատուն իրավունք ունի ստորագրած հաշիվ-ապրանքագրին կցել հատուկ կարծիք:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ (կազմում են Կողմերը)

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից և գործում է մինչև 200__ թվականի_____:

9.2 Պայմանագիրը կարող է փոփոխվել փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխված պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից:

9.3 Հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման (բաշխող-համակարգի օպերատոր) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ

լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրերում՝ ներկայացնելով այն Հանձնաժողովի գրանցմանը: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

9.4 Պայմանագիրը կազմված է երեք օրինակից՝ մեկական Կատարողի, Պատվիրատուի և Հանձնաժողովի համար:

10. ԿՈՂՄԵՐԻ ՔՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ՝

Պատվիրատու՝
 գտնվելու վայրը _____
 Հ/հ _____
 Հեռախոս
 Ֆաքս
 Գործունեության լիցենզիա N
 Ղեկավար _____

 (ստորագրություն, անուն, ազգանուն)

Կատարող՝
 գտնվելու վայրը _____
 Հ/հ _____
 Հեռախոս
 Ֆաքս
 Գործունեության լիցենզիա N
 Ղեկավար _____

 (ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
 Գրանցված է _____ 200 _____ թվական
 Գրանցման N _____ **Կ.Տ.**
 Պատասխանատու _____

 (ստորագրություն, անուն, ազգանուն)

Հավելված N 5

Հաստատված է
 Հայաստանի Հանրապետության հանրային
 ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
 2004 թվականի սեպտեմբերի 16-ի N 109-Ն
 որոշմամբ

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ԷԼԵԿՏՐՈՆԻԿԻՆԱԿԱՅԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ (ԲԱՇԽՈՂ-ՀԱՂՈՐԴՈՂ)

_____ 200_ թվական _____ ք. _____

 (ընկերության անվանումը)

այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս _____ ,
 _____ ,
 (պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մի կողմից,
և

(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Կատարող, ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մյուս
կողմից, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը
հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արտադրող՝	Էլեկտրական Էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
Բաշխող՝	Էլեկտրական Էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
Հաղորդող՝	Էլեկտրական Էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
Հանձնաժողով՝	Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
Էլեկտրաէներգիայի հաղորդում Հաշվարկային ամիս՝	Կատարողի կողմից էլեկտրական էներգիայի ընդունում, հաղորդում (տարանցում) և հանձնում Պատվիրատուին. Ժամանակահատված, որի գործողությունն սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00.00-ին և ավարտվում է օրացուցային ամսվա վերջին օրվա ժամը 24.00 -ին.
Հաշվարկային կենտրոն՝	հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
Համակարգի օպերատոր՝	Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
Պատրաստականություն՝	Կատարողի հաղորդման էլեկտրական ցանցի (դրա առանձին հանգույցների, գծերի, ենթակայանների) աշխատանքային պատրաստ վիճակը՝ էլեկտրաէներգիան հաղորդել հուսալիության պայմանագրային ցուցանիշների ապահովմամբ, սույն պայմանագրում նշված հզորության սահմաններում.
Հաշվարկային վթարային ռեժիմ՝	Կատարողի հաղորդման ցանցի որևէ էլեկտրակայանքի անջատումը Կատարողի պահանջով և (կամ) պաշտպանության սարքերից, որը տեղի է ունենում Կատարողի սպասարկման տակ գտնվող էլեկտրակայանքների վնասվածքներից.
Հանձնման կետ՝	Կատարողի էլեկտրական ցանցի կետ, որտեղ Պատվիրատուին է հանձնվում էլեկտրաէներգիայի

Ընդունման կետ՝

ընդունման կետերում գնված և հաղորդման ցանցով հաղորդված էլեկտրական էներգիան.

Տորս մաժոր՝

Կատարողի էլեկտրական ցանցի կետ, որտեղ Պատվիրատուն Կատարողին է հանձնում գնած էլեկտրական էներգիան.
արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են լիցենզավորված անձի կամ քից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Պատվիրատուի հանձնարարությամբ Կատարողը իրականացնում է Պատվիրատուի էլեկտրաէներգիայի (հզորության) հաղորդում ընդունման կետերից մինչև հանձնման կետերը, իսկ Պատվիրատուն վճարում է Կատարողին հաղորդման ծառայության մատուցման համար՝ սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան:

3. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ՀԱՂՈՐԴՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ

3.1. Հաղորդման ծառայության մատուցման սակագինը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

(3.1 կետը խմբ. 23.02.07 N 58-Ն)

3.2. Կողմերն իրավունք ունեն սահմանել էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման պայմանագրային սակագներ՝ «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման պայմանագրային սակագինը ամրագրվում է սույն պայմանագրի N 2 հավելվածում:

3.3. Հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետից: Համապատասխանաբար փոփոխվում է պայմանագրի N 2 հավելվածի համաձայնագիրը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կողմերը պարտավորվում են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերով և սույն Պայմանագրով:

4.2. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրի պատճենը տրամադրել էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության, հաղորդման և էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձանց:

4.3. Կատարողը պարտավորվում է.

4.3.1. Սույն Պայմանագրով սահմանված կարգով իրականացնել Պատվիրատուի էլեկտրաէներգիայի հաղորդումը պայմանագրային հզորությունների սահմաններում ընդունման կետից մինչև հանձնման կետերը (հավելվածներ N 1 և N 3):

4.3.2. Իրականացնել էլեկտրաէներգիայի հաղորդումը փաստացի ռեժիմներով հաշվարկված (նորմատիվային) տեխնոլոգիական կորուստների սահմաններում և կրել պատասխանատվություն փաստացի ռեժիմներով հաշվարկված (նորմատիվային) ցուցանիշը գերազանցող տեխնոլոգիական կորուստների համար՝ սույն պայմանագրի 9.2, 9.3 և 9.4 կետերով սահմանված կարգով:

4.3.3. Ապահովել հաղորդման ցանցի էլեկտրակայանքների՝ սույն պայմանագրով սահմանված հուսալիության ցուցանիշները (հավելված N 4) բնականոն և հաշվարկային վթարային ռեժիմներում:

4.3.4. Ապահովել իր էլեկտրակայանքներում տեղադրված առևտրային հաշվառքի սարքերի սպասարկումը և պահպանումը:

4.3.5. Անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին և Հաշվարկային կենտրոնին Կատարողի էլեկտրակայանքներում տեղադրված առևտրային հաշվառքի սարքերի խափանման (թերությունների) հայտնաբերման մասին և ապահովել հաշվառքի վերականգնումը ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում: Նշված ժամանակահատվածում հաղորդված էլեկտրաէներգիայի քանակությունը հաշվառվում է էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի համաձայն:

4.3.6. Պատվիրատուին և Համակարգի օպերատորին անմիջապես տեղեկացնել իր էլեկտրակայանքների այն վթարների ու թերությունների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել իր կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը:

4.3.7. Պատվիրատուի հետ համաձայնեցված կարգով ապահովել նրա լիազոր ներկայացուցիչների մուտքը Կատարողի տնօրինության տակ գտնվող տարածքները՝ անհրաժեշտ զննումներ (ստուգումներ), այդ թվում առևտրային հաշվառքի սարքերի ստուգումներ կատարելու համար:

4.4. Պատվիրատուն պարտավորվում է.

4.4.1. Վճարել Կատարողին իր սեփականությունը հանդիսացող էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման համար՝ ըստ սույն պայմանագրի N 2 հավելվածում նշված հաղորդման ծառայության մատուցման սակագնի և 6-րդ կետում շարադրված կարգի:

4.4.2. (4.4.2 ենթակետն ուժը կորցրել է 23.02.07 N 58-Ն):

4.4.3. N 1 հավելվածում նշված էլեկտրական հզորությունների հաղորդման պայմանագրային մեծությունների փոփոխման դեպքերում վերանայել N 1 հավելվածը՝ փոխհամաձայնեցված կարգով և ժամկետներում:

4.4.4. կնքել համապատասխան պայմանագրեր Համակարգի օպերատորի, Հաշվարկային կենտրոնի հետ, այդ պայմանագրերով պատվիրել համապատասխան ծառայություններ՝ ինքնուրույն և իր հաշվին կատարելով այդ ծառայությունների դիմաց վճարումները: Պատվիրված ծառայությունները մատուցողների կողմից պետք է իրականացվեն գործունեության լիցենզիայի պայմանների, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, տեխնիկական կանոնակարգերի և Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջներին և պայմաններին համապատասխան:

5. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ

5.1. Կատարողի հաղորդման էլեկտրական ցանց ընդունված և հանձնված էլեկտրական էներգիայի քանակության չափումները կատարվում են էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի համաձայն:

5.2. Կատարողի հաղորդման ցանց ընդունված էլեկտրական էներգիայի և փաստացի ռեժիմներով հաշվարկված (նորմատիվային) տեխնոլոգիական կորուստների ու փաստացի կորուստների քանակությունները հաշվարկվում են Հաշվարկային կենտրոնի կողմից, վերջինիս ու Պատվիրատուի միջև կնքված պայմանագրի և էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի համաձայն:

5.3. Հանձնման կետերում «Էլեկտրաէներգիայի ընդունման, հանձնման և փաստացի կորուստների ամսական ցուցանիշների ակտը» կազմվում է ըստ N 5 հավելվածի, ստորագրվում Հաշվարկային կենտրոնի կողմից և մինչև հաջորդ ամսվա 15-ը ներկայացվում Պատվիրատուի և Կատարողի հաստատմանը:

6. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Հաշվարկային ամսում մատուցված ծառայությունների համար Կատարողին վճարման ենթակա գումարը որոշվում է էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության պայմանագրային սակագնի (էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության վճար՝ դրամ/կՎտժ) և հաշվարկային ամսում փաստացի հաղորդված էլեկտրաէներգիայի քանակի հիման վրա: Տեխնոլոգիական կորուստների գերազանցման դեպքում կիրառվող տույժերը հաշվարկվում են ըստ սույն պայմանագրի 9.4 կետում սահմանված կարգի, եռամսյակային կտրվածքով:

(6.1 կետը փոփ. 23.02.07 N 58-Ն)

6.2. Էլեկտրաէներգիայի ընդունման, հանձնման և փաստացի կորուստների ամսական ցուցանիշների վերաբերյալ ակտը (հավելված 5) ստորագրելուց հետո մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 15-ը Կատարողը իր մատուցած ծառայությունների համար կազմում է հաշիվ-ապրանքագիր և ներկայացնում Պատվիրատուին:

6.3. Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 5-ից Պատվիրատուի հատուկ հաշվում մուտքագրված գումարները հաշվարկային ամսվա ընթացքում Կատարողի մատուցած ծառայությունների չափով համարվում են գրավադրված Կատարողի

օգտին՝ մինչև Պատվիրատուի կողմից Կատարողի նկատմամբ Հաշվարկային ամսվա վերջի դրությամբ առկա պարտավորությունների լրիվ կատարումը:

6.4. Կատարողին իր մատուցած ծառայությունների համար իր հատուկ հաշվից վճարում է Պատվիրատուն՝ մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 25-ը՝ Հանձնաժողովի հաստատած «Հատուկ հաշվից վճարումներ կատարելու կարգի» համաձայն:

6.5. Կատարողին իր մատուցած ծառայությունների համար վճարումներն իրականացվում են միայն դրամական միջոցներով:

7. ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

7.1. Պատվիրատուն և Կատարողը պարտավոր են ապահովել փոխկապակցված էլեկտրական ցանցերի պատշաճ տեխնիկական վիճակը, անվտանգությունը և պաշտպանության ու ավտոմատիկայի սարքերի բնականոն աշխատանքը՝ ըստ տեխնիկական կանոնակարգերի:

7.2. Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է փոխհամաձայնեցված պայմաններով թույլատրել մյուս Կողմի անձնակազմի (լիազոր ներկայացուցիչների) մուտքը իր տնօրինության տակ գտնվող տարածքներում տեղակայված մյուս Կողմի սեփականությունը հանդիսացող կայանքները:

7.3. Կողմերի միջև օպերատիվ փոխհարաբերությունները կարգավորվում են Հանձնաժողովի 2005 թվականի օգոստոսի 9-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգը հաստատելու մասին» N 110-Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգով և 2006 թվականի հունիսի 21-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի բաշխման և արտադրման, հաղորդման լիցենզիա ունեցող անձանց օպերատիվ փոխհարաբերությունների կարգը հաստատելու մասին» N 112-Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի բաշխման և արտադրման, հաղորդման լիցենզիա ունեցող անձանց օպերատիվ փոխհարաբերությունների կարգով:

(7.3 կետը խմբ. 23.02.07 N 58-Ն)

8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.2. Եռամսյակային արդյունքներով փաստացի ռեժիմներով հաշվարկված (նորմատիվային) կորուստների գերազանցման դեպքում Պատվիրատուն Կատարողից գանձում է տույժ՝ էլեկտրաէներգիայի գերկորուստների արժեքի չափով, որը հաշվարկվում է «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» բաց

բաժնետիրական ընկերության համար սահմանված երկդրույք սակագնի էլեկտրաէներգիայի դրույքով:

(8.2 կետը փոփ. 23.02.07 N 58-Ն)

8.3. Սույն պայմանագրի 6.4 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում, Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 30-ից Պատվիրատուն վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով: Ընդ որում, առաջնահերթության կարգով վճարվում է տույժը, ապա չվճարված գումարը:

9. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1. Առևտրային հաշվառքի սարքերը և դրանց միացման շղթաները կնքվում են սահմանված կարգով:

9.2. Էլեկտրաէներգիայի հաղորդման հետ կապված էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստների կանխատեսվող մեծությունները պայմանագրային ժամանակահատվածի համար հաշվարկվում են Հաշվարկային կենտրոնի կողմից՝ Հանձնաժողովի հաստատած «Տեխնոլոգիական կորուստների հաշվարկման մեթոդիկայով», ըստ կանխատեսվող ռեժիմների ու հոսքաբաշխումների և ներառվում են N 1 հավելվածում:

9.3. Յուրաքանչյուր Հաշվարկային ամսվա ավարտից հետո, տասնօրյա ժամկետում, էլնելով Հաշվարկային ամսվա փաստացի ռեժիմներից, Հաշվարկային կենտրոնը կատարում է տեխնոլոգիական կորուստների հաշվարկ և փաստացի կորուստների հաշվառում, ստուգում այն և ներկայացնում Պատվիրատուին ու Կատարողին (հավելված N 5):

9.4. Տեխնոլոգիական կորուստներին առնչվող փոխադարձ ֆինանսական պարտավորություններ և պատասխանատվություն սահմանելու համար Էլեկտրաէներգիայի հաղորդման տեխնոլոգիական կորուստների մեծության հաշվառումը կատարվում է Հաշվարկային կենտրոնի կողմից՝ եռամսյակային ցուցանիշներով (հավելված N 6): Եռամսյակի համար հաշվարկված փաստացի ռեժիմներով հաշվարկված (նորմատիվային) կորուստները հաշվարկվում են որպես տվյալ եռամսյակի երեք ամիսների հաշվարկային կորուստների գումար:

Եռամսյակային արդյունքներով փաստացի ռեժիմներով հաշվարկված (նորմատիվային) կորուստների գերազանցման դեպքում Պատվիրատուն Կատարողից գանձում է տույժ՝ սույն պայմանագրի 8.2 կետին համապատասխան:

(3-րդ պարբերությունն ուժը կորցրել է 23.02.07 N 58-Ն)

(9.4 կետը փոփ. 23.02.07 N 58-Ն)

9.5. Կատարողի հաղորդման ցանցի պատրաստականության հսկողությունն իրականացնում են Պատվիրատուն ու Կատարողը համատեղ՝ իրենց սահմանած կարգով:

9.6. Հաղորդման ցանցի վթարների (խափանումների), Համակարգի օպերատորի հետ չհամաձայնեցված երկարաժամկետ նորոգումների կամ Կատարողի վթարային հայտով հաղորդման ցանցի առանձին տարրերը աշխատանքից հանելու հետևանքով Պատվիրատուի կրած վնասը ենթակա է փոխհատուցման Կատարողի կողմից Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

(9.6 կետը փոփ., լրաց. 23.02.07 N 58-Ն)

9.7. Կատարողի մեղքով Պատվիրատուի կրած ուղղակի վնասը (Պատվիրատուի էլեկտրակայանքների վնասման կամ այլ պատճառով) ենթակա է փոխհատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.8. Պատվիրատուի մեղքով Կատարողի կրած ուղղակի վնասը (Կատարողի էլեկտրակայանքների վնասման կամ այլ պատճառով) ենթակա է փոխհատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.9. (9.9 կետն ուժը կորցրել է 23.02.07 N 58-Ն):

10. ՖՈՐՍ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

10.1. Սույն պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դրանք ֆորս մաժորի հետևանք են:

10.2. Կողմերը պարտավոր են ֆորս մաժորային իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

11. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

11.1. Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

11.2. Եթե տարաձայնության առարկան Կատարողի կողմից իր մատուցած ծառայությունների համար ներկայացված հաշիվ-ապրանքագիրն է, ապա ցանկացած դեպքում Պատվիրատուն պարտավոր է ստորագրել այն և կատարել վճարումը, որից հետո միայն լուծել տարաձայնությունը: Պատվիրատուն իրավունք ունի ստորագրած հաշիվ-ապրանքագրին կցել հատուկ կարծիք:

12. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(կազմում են Կողմերը)

13. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից և գործում է մինչև 200_ թվականի_____:

13.2. Պայմանագիրը կարող է փոփոխվել փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխված պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից:

13.3. Հանձնաժողովի կողմից հաղորդման ծառայության մատուցման (բաշխող-հաղորդող) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող

պայմանագրերում՝ ներկայացնելով այն Հանձնաժողովի գրանցմանը: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

13.4. Պայմանագիրը կազմված է երեք օրինակից՝ մեկական Կատարողի, Պատվիրատուի և Հանձնաժողովի համար:

14. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

14.1. Ամենամյա կազմվող փաստաթղթերի օրինակելի ձևերի ցանկը

Հավելված N 1՝ Պատվիրատուի գնած էլեկտրաէներգիայի ընդունման, հանձնման և տեխնոլոգիական կորուստների կանխատեսվող ցուցանիշները:

Հավելված N 2՝ Համաձայնագիր էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագների մասին:

Հավելված N 3՝ Առևտրային և վերստուգիչ հաշվառքի սարքերի տեղադրման և սահմանազատման կետերի ցանկ:

Հավելված N 4՝ Կատարողի (հաղորդողի) էլեկտրակայանքների հուսալիության պայմանագրային ցուցանիշները:

14.2. Ամենամյա (եռամսյակային) կազմվող փաստաթղթերի օրինակելի ձևերի ցանկը

Հավելված N 5՝ Էլեկտրաէներգիայի ընդունման, հանձնման և փաստացի կորուստների ամսական ցուցանիշների ակտ:

Հավելված N 6՝ Տեխնոլոգիական նորմատիվային կորուստների եռամսյակային ցուցանիշների գերազանցման համար տույժերի հաշվարկման ակտ:

(14.2 կետը փոփ. 23.02.07 N 58-Ն)

15. ԿՈՂՄԵՐԻ ՊՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ՝

Պատվիրատու՝
գտնվելու վայրը _____

Հ/հ _____

Հեռախոս

Ֆաքս

Գործունեության լիցենզիա N

Ղեկավար

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կատարող՝
գտնվելու վայրը _____

Հ/հ _____

Հեռախոս

Ֆաքս

Գործունեության լիցենզիա N

Ղեկավար

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

Գրանցված է _____ 200 _____ թվական

Գրանցման N _____

Կ.Տ.

Պատասխանատու _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հավելված N 1

Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման

200_ թվականի _____ N_ պայմանագրի

գնած էլեկտրաէներգիայի ընդունման, հանձնման և տեխնոլոգիական կորուստների կանխատեսվող ցուցանիշները

Պատվիրատուի անվանումը

200_ թ. մինչև _____ 200_ թ.

մլն կՎտ ժամ

N	Ցուցանիշներ	Ընդամենը տարեկան	այդ թվում՝ ըստ ամիսների													
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		
1	Էլեկտրական էներգիայի/հզորության ընդունում, որից՝ *															
1-1	Կայան N 1															
1-2	Կայան N 2															
1-3	Ներկրում															
2	Էլեկտրաէներգիայի հանձնում, որից՝															
3	Տեխնոլոգիական կորուստներ, մլն կՎտժ, որից՝															
3-1	Տեխնոլոգիական կորուստներ, մլն կՎտժ															
3-2	Առևտրային (հաշվառքի սարքերով պայմանավորված) կորուստներ, մլն կՎտժ															
4	Տեխնոլոգիական կորուստներ (% մուտքի նկատմամբ)															

* Օսկորություն: Համարիչում լրացվում է էլեկտրական էներգիայի քանակությունը (մլն կՎտժ), իսկ հայտարարումը հզորությունը (ՄՎտ):

Պատվիրատու՝

Կատարող՝

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

Կ.Տ.

Կ.Տ.

Համաձայնեցված է՝
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200_ թվական

Կ.Տ.

Հավելված N 2

Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման

200_ թվականի _____ N_ պայմանագրի

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

**ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՄԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. Սույնով Պատվիրատուն՝ _____ և
Կատարողը՝ _____ փոխադարձ
համաձայնությամբ սահմանում են էլեկտրական էներգիայի հաղորդման
ծառայության մատուցման հետևյալ պայմանագրային սակագինը՝
Էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության վճար _____ դրամ/կՎտժ:
(1-ին կետը փոփ. 23.02.07 N 58-Ն)

2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի կողմից Կատարողի համար հաստատված գործող սակագինը
հետևյալն է՝
Էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության վճար _____ դրամ/կՎտժ:
(2-րդ կետը փոփ. 23.02.07 N 58-Ն)

3. Էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման պայմանագրային
սակագինը ուժի մեջ է մտնում 200__ թվականի _____ -ից և գործում է մինչև
200__ թվականի _____ -ը:

Պատվիրատու՝

Կատարող՝

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

Կ.Տ.

Կ.Տ.

Հավելված N 3
Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման
200__ թվականի _____ N__ պայմանագրի

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ
ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՑԱՆԿ**

I. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԵՐԻ ՑԱՆԿ

N	Ենթակայանի և միացության կարգավարական անվանումը, լարումը	Հոսանքի տր-որ		Լարման տր-րի փոխարկման գործակից	Հաշվառքի գործակից (3x5)	Միացության բեռը (Ա)		Հաշվառքի ձևը (առևտրային, վերստուգիչ)	Հաշվառքի սարքի պատասխանատու անձ
		K _{հտ}	Ճշտության դասը			Առավելագույն	Նվազագույն		
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ընդունման կետեր								
2	Հանձնման կետեր								

Պատվիրատու՝

Կատարող՝

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

_____ 200__ թ.

_____ 200__ թ.

Կ.Տ.

Կ.Տ.

Համաձայնեցված է՝

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200__ թվական

Կ.Տ.

Հավելված N 4

Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման
200__ թվականի _____ N__ պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂԻ (ՀԱՂՈՐԴՈՂԻ) ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՀՈՒՍԱՎԻՈՒԹՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ _____ Թ.

Հուսա- լիության ցուցանիշ	Սարքա- վորումներ, ՕԳ-եր	միջակ- տակյան 110- 200կՎ ՕԳ (100կմ)	220կՎ մեկ շղթա ՕԳ (100կմ)	110կՎ մեկ շղթա ՕԳ (100կմ)	110կՎ երկշղթա մեկ շղթա ՕԳ (100կմ)	110կՎ երկշղթա միաժամ ՕԳ (100կմ)	110կՎ Տր-ներ Եռաթափ (1 հատ)	110կՎ Տր-ներ Երկթափ (1 հատ)	Ավտոտրանս- ֆորմատոր 220/110կՎ (1 հատ)	Օդային անջատիչներ		Ցուղային անջատիչներ	
										220կՎ (1 հատ)	110կՎ (1 հատ)	220կՎ (1 հատ)	110կՎ (1 հատ)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	
Պ ₁ (բոլոր տեսակի խախտումների հոսքի պարամետրեր)													
Պ ₂ (կայուն խախտումների հոսքի պարամետրեր)													
T _վ (ժամ), վերականգնման միջին տևողություն													
T _ս (ժամ), նորոգման միջին տևողություն													

Ծանոթություն - հուսալիության ցուցանիշները հաշվարկված են ըստ 1998-2000 թթ. վիճակագրական տվյալների՝ հետևյալ բանաձևով.

սարքավորումների համար - $\omega = m/n \cdot T$ 1/տարի, գծերի համար $\omega = m \cdot 100/L \cdot T$ 1/տարի;

$$T_{\text{վ}} = \frac{\sum_{i=1}^m t_i}{m} \quad \text{ժամ}; \quad T_{\text{ս}} = \frac{\sum_{i=1}^k t_i}{k} \quad \text{ժամ}, \quad \text{որտեղ } m\text{-ը } T \text{ տարիների ընթացքում տեղի ունեցած}$$

խախտումների թիվն է 100կմ երկարության գծի համար, L-ը գծերի գումարային երկարությունն է (կմ), t_i i-րդ-ը խախտման հայտնաբերման վերացման ժամանակն է, K-ն նորոգումների թիվը, n-ը նույնանման ցանցային տարրերի թիվն է:

Պատվիրատու՝

Կատարող՝

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

_____ 200__ թ.

_____ 200__ թ.

Կ.Տ.

Կ.Տ.

Հավելված N 5

Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման
200__ թվականի _____ N__ պայմանագրի

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ

Ա Կ Տ

Հաշվարկային ժամանակաշրջանը՝ _____ մինչև _____ թ.

N	Ցուցանիշներ	Չափման միավոր	Քանակ	Հիմքը	Ծանոթություն
	I. Էլեկտրաէներգիայի ընդունում	մլն կՎտժ		(Տարեկան պայմանագիր)	
	այդ թվում՝				
1.1	Կայան N 1	մլն կՎտժ			
1.2	Կայան N 2	մլն կՎտժ			

1.3	Ներկրում _____-ից	մլն կՎտժ			
	II. Էլեկտրաէներգիայի հանձնում	մլն կՎտժ			
	III. Էլեկտրաէներգիայի կորուստներ	%			
3.1	Փաստացի կորուստ	մլն կՎտժ			—
3.2	Փաստացի կորուստ	%			—
3.3	Փաստացի ռեժիմներով հաշվարկված նորմատիվ կորուստ	մլն կՎտժ			—
3.4	Փաստացի ռեժիմներով հաշվարկված նորմատիվ կորուստ	մլն կՎտժ			
3.5	Կորուստների մեծությունները ամսվա համար՝ (3.5-3.1)	մլն կՎտժ			
3.6	Նույնը, պայմանագրային ժամկետի սկզբից աճողական կարգով				

Պատվիրատու՝

Կատարող՝

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

_____ 200__ թ.

_____ 200__ թ.

Կ.Տ.

Կ.Տ.

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200__ թվական

Կ.Տ.

Հավելված N 6

Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման
200_ թվականի _____ N _____ պայմանագրի

200_ թ. _____ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ
ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՈՒՅԺԵՐԻ
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

(Վերնագիրը փոփ. 23.02.07 N 58-Ն)

Ա Կ Տ

N	Մեծությունը	Չափման միավոր	Քանակ	Ծանոթություն
1	Տեխնոլոգիական նորմատիվային (հաշվարկային) կորուստները _____ եռամսյակում	մլն կՎտժ		
2	Փաստացի տեխնոլոգիական կորուստները _____ եռամսյակում	մլն կՎտժ		
3	Փաստացի և նորմատիվային տեխնոլոգիական կորուստների տարբերությունը _____ եռամսյակի համար	մլն կՎտժ		
4	Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազԶԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության էլեկտրաէներգիայի դրույքը	դր/կՎտժ		
5	Հաշվարկային եռամսյակի արդյունքներով վճարման ենթակա գանձման ենթակա տույժը	մլն կՎտժ		

Պատվիրատու՝

Կատարող՝

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

_____ 200_ թ.

_____ 200_ թ.

Կ.Տ.

Կ.Տ.

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 200_ թվական

Կ.Տ.

(Հավելվածը փոփ., խմբ. 23.02.07 N 58-Ն)